Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-373-13.09.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի ՝

1) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) գործակալություն՝ պետական գրանցում եւ պետական հաշվառում իրականացնող մարմին՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) գործող գրասենյակ.».

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 19.1-րդ եւ 19.2-րդ կետերով.

«19.1) անձը նույնականացնող տվյալներ՝ ֆիզիկական անձի համար՝ անուն, ազգանուն, անձնագրի կամ նույնականացման քարտի համար, հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար, հաշվառման կամ բնակության վայրի հասցե, անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անուն, ազգանուն, պետական հաշվառման համար, հաշվառման վայրի հասցե, իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանում, գրանցման համար, գտնվելու վայրի հասցե.».

19.2) կապի միջոցներ՝ էլեկտրոնային փոստի հասցե, փոստային կապի եւ հաղորդակցության ապահովման այլ տվյալներ.».

3) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 22.1-րդ կետով.

«22.1) դիվանագիտական ծառայության մարմին՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ (դեսպանություններ եւ հյուպատոսական հիմնարկներ), որոնք կատարում են գործակալության սպասարկման գրասենյակի որոշակի գործառույթներ.»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Գրառման բովանդակությունը եւ այն կատարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ Նախարար):

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1. հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1. «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն» գրասենյակը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության իրավահաջորդը:»:

2. Հոդվածի 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած» բառերը փոխարինել «Գործակալության» բառով:

3. Հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Գործակալության սպասարկման գրասենյակի գործառույթները կարող են իրականացվել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային ծառայությունների միասնական գրասենյակների, նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների, ինչպես նաեւ քաղաքացիների սպասարկման ոլորտում գործառույթներ իրականացնող այլ սուբյեկտների կողմից, որոնց գործառույթները, դրանց իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դիվանագիտական ծառայության մարմինները ընդունում են գործակալության գործառույթներին առնչվող դիմումները եւ ընթացք են տալիս դրանց, որի կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 5.

1. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից, 11-րդ հոդվածի 3-րդ մասից, 13-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերից, 17-րդ հոդվածի 11-րդ մասից, 20-րդ հոդվածի 22-րդ մասից, 22-րդ հոդվածի 3-րդ մասից, 23-րդ հոդվածի 1-ին մասից, 26-րդ հոդվածի 18-րդ մասից, 59-րդ հոդվածի 6-րդ մասից, 66.1-րդ հոդվածի 1-ին մասից եւ 68-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության արդարադատության» բառերը՝ «նախարարություն» կամ «նախարար» բառերը փոխարինելով «Նախարարություն» կամ «Նախարար» բառերով:

2. Օրենքի 9-րդ հոդվածի 4.2-րդ մասից, 17-րդ հոդվածի 3-րդ մասից, 17-րդ հոդվածի 10-րդ մասից, 26-րդ հոդվածի 28-րդ մասից, 42-րդ հոդվածի 1-ին մասից հանել «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող » բառերը՝ «նախարարություն» կամ «նախարար» բառերը փոխարինելով «Նախարարություն» կամ «Նախարար» բառերով:

3. Օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասից, 62-րդ հոդվածի 2-րդ մասից, 63-րդ հոդվածի 1-ին մասից, 65-րդ հոդվածի 2-րդ մասից եւ 65-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «արդարադատության » բառը՝ «նախարարություն» կամ «նախարար» բառերը փոխարինելով «Նախարարություն» կամ «Նախարար» բառերով:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածի 1-մասի՝

1) 7-րդ կետում հանել «, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն» բառերը,

2) 8-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«8) որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի հաշվառման հասցեն, իսկ հաշվառման հասցեի բացակայության դեպքում՝ բնակության կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վայրի հասցեն: Եթե որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձն օտարերկրյա ֆիզիկական անձ է, ապա

վերջինիս վերաբերյալ գրառվում են հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, ինչպես նաեւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վայրի հասցեն.».

2) 9-րդ կետում «տեսակ(ներ)ը» բառը փոխարինել «հիմնական՝ առաջնային տեսակը» բառերով:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 25.2-րդ հոդվածով.

«Հոդված 25.2. Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման եւ հիմնարկի պետական հաշվառման գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունները

1. Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման եւ հիմնարկի պետական հաշվառման գրանցամատյանում գրառվում են՝

1) առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը.

2) պետական գրանցամատյանում պետական հաշվառման համարը.

3) պետական հաշվառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.

4) գտնվելու վայրի հասցեն.

5) կապի միջոցները.

6) տեղեկություններ հիմնադրի մասին (անվանում, պետական գրանցման համար).

7) տեղեկություններ առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավարի մասին (անձը նույնականացնող տվյալները, կապի միջոցները): Սույն կետով սահմանված տեղեկությունները գրառվում են փոփոխությունների պետական հաշվառման ժամանակ, ինչպես նաեւ այն դեպքում, երբ նոր հաշվառվող առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի հիմնադիրն ընտրել է (նշանակել է) առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավար.

8) գործունեության դադարման դեպքում՝ նշում այդ մասին.

9) հարկ վճարողի հաշվառման համարը (օտարերկրյա իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման դեպքում):

2. Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների վերաբերյալ գրանցամատյանում ենթակա են գրառման սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները, բացառությամբ 1-ին մասի 7-րդ կետի: Սույն մասով նախատեսված տեղեկությունները գրանցամատյանում գրառվում են՝ հաշվի առնելով սույն մասով նախատեսված իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող առանձին օրենքներով նախատեսված առանձնահատկությունները: Սույն մասով նախատեսված տեղեկությունները գործակալությանը տրամադրվում են ինքնաշխատ եղանակով:»:

Հոդված 8. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1) 1-րդ մասի 9-րդ կետում «տեսակ(ներ)ը» բառը փոխարինել «՝ առաջնային տեսակը» բառերով,

2) 6-րդ մասը «հիմնարկի» բառից հետո լրացնել «անվանումը եւ » բառերով:

Հոդված 9. Օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 26-րդ հոդվածի 28-րդ մասից հանել 2-րդ նախադասությունը:

Հոդված 11. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 35-րդ հոդվածը՝

1) 2-րդ մասը «բացառությամբ» բառից հետո լրացնել «ոչ առեւտրային կազմակերպությունների եւ» բառերով, իսկ «սահմանված» բառից հետո՝ «այլ» բառով:

Հոդված 13. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «, ինչպես նաեւ սույն օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում նշված հոդվածով ամրագրված տեղեկություններ» բառերը:

Հոդված 15. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ եւ 6-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել եւ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ կետով

«7) գործադիր մարմնի ղեկավարի հայտարարագիրն այն մասին, որ իրավաբանական անձի մասնակցությամբ հարուցված եւ չավարտված դատական գործեր, հարուցված եւ չկարճված կատարողական վարույթներ, հանձնաժողովի կողմից տվյալ իրավաբանական անձի նկատմամբ հարուցված եւ չավարտված վարչական վարույթներ, ինչպես նաեւ հանձնաժողովի նկատմամբ պարտավորություններ չկան:»::

Հոդված 16. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6.1.-րդ մասով.

«6,1) սույն օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված հայտարարագրի ստուգման արդյունքում (դատական դեպարտամենտի ու հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեղեկատվական համակարգերի միջոցով) դրա անարժանահավատության վերաբերյալ տեղեկատվության հայտնաբերումը,»:

Հոդված 17. Օրենքի 53-րդ հոդվածի 5-րդ մասը «հանձնաժողովի» բառից հետո լրացնել «, Դատական դեպարտամենտի, հարկադիր կատարումն ապահովող ծառայության» բառերով:

Հոդված 18. Օրենքի 58-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ եւ 3-րդ մասերով՝

«2. Առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի հիմնադրի գործունեության դադարման հիմքով առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը պետական հաշվառումից հանելու համար ներկայացվում է միայն շահագրգիռ անձի դիմումը:

3. Առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը պետական հաշվառումից հանելու համար պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված 19. Օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12.2-րդ կետեով

«12.2) Գրանցամատյանում գրառված լինելու դեպքում քաղվածքը ներառում է առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը, հաշվառման համարը:»:

Հոդված 20. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 63.1-րդ հոդվածով.

«Հոդված 63.1. Առանձնացված ստորաբաժանման եւ հիմնարկի հաշվառումը հաստատող՝ պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքը

1. Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման եւ հիմնարկի մասին քաղվածքը հայցվող օրվա դրությամբ պետք է ներառի գրանցամատյանում գրառված հետեւյալ տեղեկությունները.

1) առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը.

2) պետական հաշվառման համարը.

3) պետական հաշվառման տարեթիվը, ամիսը, օրը.

4) գտնվելու վայրի հասցեն.

5) կապի միջոցները.

6) տեղեկություններ հիմնադրի մասին (անվանում, պետական գրանցման համար).

7) առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավարի մասին տեղեկություններ (անձը նույնականացնող տվյալները, կապի միջոցները).

8) հաշվառումից հանվելու տարին, ամիսը, օրը.

9) տեղեկությունների հայցման տարին, ամիսը, օրը.

10) քաղվածքի տրամադրման տարին, ամիսը, օրը:»:

Հոդված 21. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, ընդունվում են սույն օրենքից բխող բոլոր ենթաօրենսդրական իրավական ակտերը: